ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/11Ն» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 30.06.2025թ.
ժամը 15:00
ավարտ՝ 11.07.2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Աստղիկ Խաչատրյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Հրանտ Մինասյան
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Աննա Ավագյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Էդգար Ֆրանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/11Ն» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ:
2. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
3. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:
5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին:
6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

* Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի, 43–րդ հոդվածի, 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

Չափաբաժինների համարները		*Չափաբաժնի անվանումը*
համարները	*գնման գինը*	
1	12 362 400	**Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ22+152 - կմ27+000 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ**
2	3 217 500	**S-3-8, /Մ-5/ - Մայիսյան /S-3-47/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ3+400 - կմ4+900 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ**
3	8 112 000	**S-3-47/Հ-17/-Լուկաշին-Նորավան-Արմավիր տեղական նշանակության ավտոճանապարհի կմ3+140-կմ7+300 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ**
4	6 825 000	**S-3-63,/Հ-17/ - Հացիկ - /Հ-17/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000- կմ 3+500 հատվածի հիմնանորոգման հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ**

2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

2.1 Ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են սահմանված ժամկետում՝ **2025 թվականի հունիսի 30-ին, ժամը՝ 15:00-ին**:

2.2 Սահմանված կարգով ներկայացված հայտերը, որենք ընդունվել են Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի 7-ն են:

2.3 Ընթացակարգի շրջանակներում հայտեր ներկայացրած մասնակիցների մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	ՀՀ ՇՄ Գյումրի Եպիսկոպոս Սմբատյան 4	05550895	arch.projectllc@mail.ru Հեռ. +374 98 955155
2	«ՄԱԼԿ » ՍՊԸ	ՀՀ ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1	05549897	malkgroup@yahoo.com Հեռ. +374 43 522 581 +374 312-3-88-88
3	«Մոդուլ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ն. Զարյան 22/3	05020542	info@modul.am Հեռ. +374 77 772 670
4	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ՀՀ ք, Երևան, Աճառյան 54բ, 375040	00813453	llcdorproject@mail.ru lil.poghosyan17@gmail.com Հեռ. +374 93 08 17 87
5	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8	08417251	info@haldi.am Հեռ. +374 91 430416
6	«Պռոլաբ» ՍՊԸ	ՀՀ ք, Երևան, Կոմիտաս պ., շ. 27 բն .27	00216582	prolabarmenia@gmail.com Հեռ. +374 77 050 650
7	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան, Աճառյան 1-ին նրբանցք, 24	01064204	artsakhroad@gmail.com Հեռ. +374 10 628 785, +374 91 219 243

3. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

3. 1 Ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները.

Չափաբաժին 1: Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ22+152 -կմ27+000 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Պռոլաբ» ՍՊԸ**	**1 545 300**	**309 060**	**1 854 360**
2	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	4 000 000	800 000	4 800 000
3	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	4 125 000	825 000	4 950 000
4	«Մոդուլ» ՍՊԸ	4 300 000	860 000	5 160 000
5	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	4 900 000	980 000	5 880 000
6	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	5 500 000	0	5 500 000
7	«ՄԱԼԿ» ՍՊԸ	6 700 000	1 340 000	8 040 000

Չափաբաժին 2: Տ-3-8, /Մ-5/ - Մայիսյան /Տ-3-47/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ3+400 - կմ4+900 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Մոդուլ» ՍՊԸ**	**900 000**	**180 000**	**1 080 000**
2	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	1 000 000	200 000	1 200 000
3	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	1 075 000	215 000	1 290 000
4	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	1 250 000	250 000	1 500 000
5	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	1 818 000	0	1 818 000
6	«ՄԱԼԿ» ՍՊԸ	2 600 000	520 000	3 120 000

Չափաբաժին 3: Տ-3-47/Հ-17/-Լուկաշին-Նորավան-Արմավիր տեղական նշանակության ավտոճանապարհի կմ3+140-կմ7+300 հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ**	**1 000 000**	**200 000**	**1 200 000**
2	«Պռոլաբ» ՍՊԸ	1 014 000	202 800	1 216 800
3	«Մոդուլ» ՍՊԸ	2 496 000	499 200	2 995 200
4	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	2 600 000	520 000	3 120 000
Մերժված հայտեր				
-	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	2 700 000	540 000	3 240 000
-	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	4 500 000	0	4 500 000
-	«ՄԱԼԿ» ՍՊԸ	5 600 000	1 120 000	6 720 000

Չափաբաժին 4: S-3-63,/Հ-17/ - Հացիկ - /Հ-17/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000- կմ 3+500 հատվածի հիմնանորոգման հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«Պռոլաբ» ՍՊԸ**	**853 125**	**170 625**	**1 023 750**
2	«Մոդուլ» ՍՊԸ	2 100 000	420 000	2 520 000
3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	2 275 000	455 000	2 730 000
4	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	2 300 000	460 000	2 760 000
5	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	2 498 000	499 600	2 997 600
6	«Արք. Պրոեկտ» ՍՊԸ	3 500 000	0	3 500 000
7	«ՄԱԼԿ» ՍՊԸ	4 700 000	940 000	5 640 000

3. 2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին

4.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝

- ✓ **««Արցախճան» ինստիտուտ» ՓԲ, «Արք. Պրոեկտ» ՍՊ, «ՄԱԼԿ» ՍՊ ընկերությունների** կողմից ներկայացված հայտերում թիվ 3 չափաբաժնի գնման առարկայի անվանումը Գնային առաջարկում (Հավելվեծ N2) չի համապատասխանում Հրավերով սահմանված թիվ 3 չափաբաժնի գնման առարկայի անվանմանը:
- ✓ **«Արք. Պրոեկտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը ստորագրված չեն վերջինիս կողմից: Հրավերի 2-րդ մասի 2.6 կետի համաձայն՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:
- ✓ **«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում ներառված Դիմում հայտարարությունը (Հավելված N1) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ բացակայում է որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հավելվածին կից ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվությունը: Ներկայացված մասնագիտական փորձառությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ Հրավերի 1-ին մասի 2.4 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է չափաբաժիններով և մասնակիցը հայտ է ներկայացնում ավելի, քան մեկ չափաբաժնի համար, ապա նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված գնման առարկաների նախահաշվային արժեքի հանրագումարի հիսուն տոկոսից:
- ✓ **«Մոդուլ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում Դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ ներկայացված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ **2024թ. իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:**

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, համաձայն որի Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ **<u>եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան</u>** և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները **««Արցախճան» ինստիտուտ» ՓԲ, «Արք. Պրոեկտ» ՍՊ, «ՄԱԼԿ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը՝ թիվ 3 չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:**

2) Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը 09.07.2025թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել **«Արք. Պրոեկտ» ՍՊ, «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊ և «Մոդուլ» ՍՊ ընկերություններին** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

11.07.2025թ. ժամը 09:30–ին հրավիրված նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ «Արք. Պրոեկտ» ՍՊԸ-ի, «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի և «Մոդուլ» ՍՊԸ- կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց **«Արք. Պրոեկտ» ՍՊԸ-ի (1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով), «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի և «Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:**

6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

6.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

6.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

7.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝

- **1-ին և 4-րդ չափաբաժինների մասով «Պռոլաբ» ՍՊԸ-ին**
- **2-րդ չափաբաժնի մասով՝ «Մոդուլ» ՍՊԸ-ին**
- **3-րդ չափաբաժնի մասով՝ «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ին**

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

7.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

7.4 Ընթացակարգի ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Աստղիկ Խաչատրյան**	.....
	Հրանտ Մինասյան	.....
	Աննա Ավագյան	.....
	Էդգար Ֆրանգուլյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....